

Գրիգոր Պատրիարզն Իրուսաղեմի,  
Որ յայնժամ հիւանդ ճընշիւր ի մահճի,  
Մըտեալ յօր տօնի՝ ի պատարագի,  
Մուծէք զիս ասէր անդ յեկեղեցի :

Ու բամբը խրատիւք եւ ձայնիւ ահեղ,  
Ցուցանէր ազգին՝ գոյըն յոյժ մեծ մեղ  
Ապերախտութեանն անձանցն անշըքեղ,  
Ցուցեալ առ Յօհան՝ Պատրիարզն անմեղ :

Ապա սպառնացեալ՝ յայտ ազգին ասէր,  
Ի փոխել գոցա Պատրիարզն ձեր,  
Ընտրեսցի այլ ոք եւս գահիս ի տեր :  
Ձի չէ ինձ հաճոյ ազգ խրոովստեր :

Ձայն լուեալ յուզաց՝ փոքր ինչ զըզմանն  
Ի շար խորհրդոց՝ զայն օր հեռանան.  
Բայց իւրեանց փոսխած անդրէն իսկ դառնան,  
Գրքգրուեալ զամբօխն եւ եւս շարահան :

Յետոյ եւ Յակոբ Նալեան Վարդապետ,  
Ելանէր յատեան եւ առնէր զայնս մէտ,  
Կասիլ ի շարեաց, ոչ գոլ վատ՝ և անպէտ,  
Այլ այն իսկ լինէր բան անշահաւետ :

Արդ՝ յայտ է հըմտաց կոստանդնուպօլսոյ  
Թէ զի՛արդ են անդ՝ յոխորտ՝ և ահարկու,  
Կեսարացի Հայք՝ քան զայլ Հայս ազգու.  
Ապա՝ շահիլ զայնս հարկ էր եւ օգտածու :

Վասն այն՝ Սարգիս մեր՝ Վարդապետ ճարտար,  
Չաւազս կեսարեանց՝ յիւր սենեակ էառ,  
Չոր քաջ համոզմամբ՝ հաճ հաւան արար,  
Հաճել զհամշիրակս, թողուլ՝ զշար կաճառ :

Կեսարեանց ուրեմն՝ իշխանաց ժողով,  
Կոչէր անդ իւր լըռին եւ մեղմով,  
Յիւր համշիրակաց՝ զանձինքս անվրդով,  
Որք՝ և էին ճարպիկ եւ քաջակորով :